

չես ուզեր ամուսնանալ Հետք : Ան պատրաստ է :  
Իսեղձը մինչև առտու փողոցները կը թափառի :

— Ոչ, Մնա՛կ, կարծեմ թէ՛ աս ալ կ'անցնի :  
Ես կը վախեամ ամուսնութենէն : Ո՞վ գիտէ,  
կարելի է մեր բնութիւնները չյարմարին : Ես  
չսեր եմ որ անոր ընտանիքը չ'ուզեր զիս : Ես  
ալ չեմ ցանկար անոնց որդւոյն Հետ պատկուիր :

— Կ'ուզէին ներկայացնել "Հաւատք, Յոյս,  
Աէր", ըսաւ Մնակեան, բայց տեսնելով որ դուն  
տկար ես, անոնք յետաձգեցին : Ես կ'ըսեմ թէ  
կարող ես, այն պայմանով որ փորձերք քու  
տունդ կատարուին : Այդ իրիկունը, ան ան-  
պատճառ թատրոն կուգայ, դուն ալ կը տեսնես  
ու կը Հանգստանաս :

— Ի՞նչպէս, Մնա՛կ, մի՞թէ՛ ես կարող եմ  
ներկայացում տալ :

— Կարող ես, կարող ես, ըսելով Հետացաւ,  
Փորձերն ըրի՛ք մեր տունը : Ներկայացման  
իրիկունը, չեմ գիտեր ի՞նչպէս գացի թատրոն :  
Կիսով չափ լեցուն էր : Առաջին արարուածէն՝  
արդէն ուժերս սպառուեցան : Ան նստած էր  
օթեակի մը մէջ՝ բարեկամի մը Հետ : Երբ վա-  
րագոյրը իջեցուցին, Մնակեան ին ըսի .

— Ա՛յո, Մնա՛կ, կարողութիւն չունիմ ոտքի  
վրայ կանգնելու . ի՞նչպէս պիտի տանիմ մինչև  
վերջը :

— Ես քեզ կ'ազատեմ զերեզ, ըսաւ :

Ես ոչինչ Հասկցայ : Այդ թատրոնին մէջը,  
լուսաւորութիւնը Հասարակ լապահներով էր :  
Քուլիսներէն կախուած էին քանի մը լամպար-  
ներ : Մնակեան կունկով զարկաւ քուլիսին,  
լամպարներէն մէկ քանին վար ձգեց, փոքրիկ  
վերջ մը ստացաւ գլխէն : Ցախտակամանին վրայ  
լամպարին մէկը բռնկեցաւ : Մնակեան ուշա-  
թափ եղաւ, և ներկայացումը իսպառուեցաւ :

Ես, զարմացած ու գող ելած, տուն գացի :  
Չէի կարծեր թէ այդպիսի բան մը կարելի էր  
ընել :

Այդ տարօրինակ ներկայացումէն յետոյ,  
գերասանները ցրուեցան, ամէն ոք իր տեղը  
գնաց, "սեպոն"ը վերջացաւ :

ՀՐԱՍՏԱՍ

(Շարունակելի)

### Հ Ա Յ Է Ջ Ե Ր

### ՏԱՂ ՍԻՐՈՅ

Աւերջ սիրով պիտի, զէմ չպիտի ճարով,  
Քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ,  
ես լալով ծառ կուգամ, դուն ծիծաղելով :

Ես՝ ք վարդ ու մանուշակ դու անուանո՞ս,  
Ել կամար փայլէն երբեք մեզի մօս .  
Գու մարդ ես քուպաներ, ճեռվիդ արիւնոս .  
Քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ,  
ես լալով ծառ (1) կուգամ, դուն ծիծաղելով :

Այսօր գարունն էկէր, ամիսն է մայիս,  
Այդ եմ ծով արեւոյի խոյուն կու նայիս,  
Երբտ ճուսա փայլեա՛ խելիս կու անիս .  
Քեզ կ'ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ,  
ես լալով ծառ կուգամ, դուն ծիծաղելով (2) :

Երեսդ կարմիր է զէս կախա արիւն,  
Իմացա՛ր, ինչ եղայ ես ի քո սիրուն .  
Քանի՞ մէկ կու պանեա զու զիս երեսուն .  
Քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ,  
ես լալով ծառ կուգամ, դուն ծիծաղելով :

Այվրնիդ քո քուտ է, ընձիդ կամար,  
Երեսդ լոյս կուտայ ինձ զամս ու դամար .  
Գու մի՛ մեռնիր, մեղի ես, մեռնիմ ինչ համար .  
Քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ,  
ես լալով ծառ կուգամ, դուն ծիծաղելով :

Երեսդ լոյս կուտայ զէս դարաեին,  
Կընծօր ես՝ կու փայլիս ներքե սերունին,  
Քեղնէ գաւթից ինձի մեռնի կ'երևին .  
Քեզ ասեմ՝ ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ,  
ես լալով ծառ կուգամ, դուն ծիծաղելով :

Ետդր զրգամ քամկակ, ներմակ կրնուէ է,  
Պու կընտրող քամար քարքար ու ճուէ է .  
Անեի կու սիրելի զքեզ՝ լեզուդ ամուտ է .  
Քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ,  
ես լալով ծառ կուգամ, դուն ծիծաղելով :

1) Ձեռագրին մէջ՝ տուն :  
2) Ձեռագրին մէջ այս տողը կը պակսի :

Աշկերոյց կու ճանչեմ որ սիրոյ սէր ես .  
 Քէ պագ (1) մի այլ չի ասո՛ւ նայ մի դագ սէր ես,  
 Գիտեմ որ հոր ու մոր՝ ազգութեւ սէր ես .  
 Քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ,  
 Ես լալով ծառ կուգամ, դուն շիճաղելով :

Ացաք ես հեղի մեղրոյ ի՛մ ի գար .  
 Երբ կամանչիդ վերայ կար խրոյ հագար ,  
 Անկաւ ինչու ու քրճոց՝ այլ վերայ չի գար :  
 Քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ,  
 Ես լալով ծառ կուգամ, դուն ծիծաղելով :

Ծառայ լինիմ, էար, քո սեւ սեւ աշկերոյց .  
 Ան դու գիտ բղբերես ի մե՛ք ծր՛երոյց,  
 Գիտեմ որ կու մուռնիմ ես ի քո սիրոյց .  
 Քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ,  
 Ես լալով ծառ կուգամ, դուն ծիծաղելով :

Հողի՛, դու գեա բաբբը լուսին բոյորեայ ,  
 Ծամերդ ի յուսոյ ի վեր ինչու յուրուայ ,  
 Երբոր ի յիս նայիս այ՛ք խորուայ (2),  
 Քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ,  
 Ես լալով ծառ կուգամ, դուն ծիծաղելով :

Հայ՛ ամբի՛ր, իմ նայրս դեռ չես իմացեր .  
 Ես այլ, ա՛մ, քո սիրոյն ո՛նց եմ գիմացեր,  
 Քեզնէ ի գոտ մարոյց հոյի՛ չեմ ասե՛ր .  
 Քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ,  
 Ես լալով ծառ կուգամ, դուն ծիծաղելով :

Դարիշուկ եմ եկեր ես ի ձեր գեղին .  
 Երեսքս կու քրվում ռեխիլս հողին ,  
 Հիւանդ եմ քո սիրուն, դարձե՛ր եմ հեղին ,  
 Քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ,  
 Ես լալով ծառ կուգամ, դուն ծիծաղելով :

Դարիք Մըլըրեհիքն գիւր ետն է գովը .  
 Իւր սեւ աշկներքն նրմանի՛ ծովը ,  
 Բաթակ մրկուում ունիս, Լա՛ր, նճանք քեւեր .  
 Քեզ ասեմ, ինձ լրտէ՛, կարմիր ու ներմակ,  
 Ես լալով ծառ կուգամ, դուն ծիծաղելով :

(Էջմիածնայ թիւ 1999 ձեռագիր, Տաղարան)

ԽՈՐԷՆ ԵՐԱՊԷՅԻ ԱՆՏԻՊ ՏԱԼԵՐ\*)

Ս Ի Բ Է Զ Ի Ս

Սիրե՛ գիս, Աղինէկի ,  
 Իմ կուսուն գեղեցիկի ,  
 Տու՛ր ինձ գեթ սիրոյն իկե  
 Իւ ըզնեզ սիրեմ ես :

Ձի ըզնեզ բոյորով  
 Կը պաշտեմ ես հողբով ,  
 Եւ զիս սիրոս բովանդակ  
 Քեզ ձօնած եմ, հրեչտակ :

Մըսածմունքս իմ եւ բախս ,  
 Բարխանուն բոյնանանց ,  
 Պատկանին ըսկ ինքի ,  
 Ո՛վ իմ կոյս գեղանի :

Թե՛ ի ճիւ քե՛ գիշեր  
 Տոցորե՛ գիս քո սէր .  
 Եւ կեանքս վշտայտե  
 Դու ես աստե՛ն ու բեւեռ :

\*) Խորեն Կարպէյ արքեպիսկոպոսի անտիպ տաղերու այս հավաքածուն առաջին կտորները արդէն հրատարակած ենք Առնշիտի մէջ (Ը տարի, թիւ 12, Ը տարի, թիւ 1-2, Թ տարի, թիւ 1-2) : Եւս թիւէն՝ կը վերսկսենք մնացեալ կտորներուն հրատարակումը : Մեծ մասամբ սիրային տաղեր են : Զարտի է որ Կարպէյ, թէպէտ Ս Կոյսին երկրպագու, Ըտողիկին ալ անտարրեր չէ մնացած : Իր Վարդէի հասորը արդէն իսկ փունջ մըն է սիրային գեղաներու՝ որոնք՝ թէև՝ պատշաճութիւնները յարկելու համար քրոջ մը ու զոռած, յայտնապէս կը պարունակեն եզրայրականէն տարրեր եւ աւելի վրդովիչ գգացում մը . իսկ այս անտիպ տաղերուն մէջ՝ քերթողը իր ներքին յոյրն անաբջ պատկերացուցած է : Մեծ մասամբ՝ առանց շատ ինքնատիպ ու խոր ըլլալու, այս տաղերը, քրեռչ ու մարտը՝ համակ ոտմանութիկ՝ զգայնութեամբ համակուած՝ աղբոր փափուկ հայերենով մը գրուած՝ սրբա-հիւս գաշնեբգու տողերով սիրուն էջեր են, արժանի՛ հեղինակին քերթողական ստուար ու պրպարան գործին մէկ անկիւնը իրենց որոշ տեղը գրաւելու :

1) Ձեռագիր՝ Պա՛մ :  
 2) Ան. Յայրուայ :